ՀՈՒՇԵՐ ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ՄԱՍԻՆ
(Ծննդյան 130-ամյակի առթիվ)

XX դարասկզբի հասարակական-քաղաքական գործիչ և հրապարակախոս-խմբագիր Դավիթ Անանունը՝ Դավիթ Հովհաննեսի Տեր-Դանիելյանը (1879–1943), հայ իրականության հայտնի դեմքերից է: Ծնվել է Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Մեծշեն գյուղում: Ապրել է Բաքվում, Երևանում, Աստրախանում, երկար տարիներ եղել է աքսորում:

Ծավալել է հասարակական-քաղաքական ակտիվ գործունեություն, եղել է Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության ղեկավար գործիչներից մեկը, աշխատակցել է հայ մամուլին, հիմնադրել է մի շարք պարբերականներ, թողել՝ ստեղծագործական հարուստ ժառանգություն: Վերջինս սփռված է XX դարասկզբի առաջին քառորդին լույս տեսնող հայ պարբերական մամուլի էջերում: Եթե նրա տպագրված ուսումնասիրությունները, հոդվածները, խմբագրականները, կատարած թարգմանությունները (իր անունով, ծածկանուններով, անստորագիր), անտիպ գործերը ի մի հավաքենք, ապա դրանք կարող են մի տասնյակ հատոր կազմել:

Ստորև հրապարակում ենք գրող ու հրապարակախոս, հասարակական-քաղաքական հայտնի գործիչ Արամայիսի [Միսաք Տեր-Դանիելյանի (1874–1954)] «Փշրանքներ» հուշագրությունից Դավիթ Անանունի կյանքին ու հասարակական-քաղաքական գործունեությանը վերաբերող հատվածը, որը նաև հետաքրքիր տեղեկություններ է պարունակում ժամանակի հայ իրականության մասին: Ի դեպ, այս հուշերը տպագրվել են «Ուրբաթ» հասարակական-քաղաքական, մշակութային անկախ շաբաթաթերթի 1992 թ. դեկտեմբերի 11-ի թիվ 48-ում, որտեղ, սակայն, նշված չեն ոչ հուշերի աղբյուրը և ոչ էլ դրանք հրապարակողի անուն-ազգանունը: Բացի այդ, կան էական տարընթերցումներ:

Դավիթ Անանունին վերաբերող Արամայիսի հուշերը պահվում են Հայաստանի ազգային արխիվում (ֆ. 150, ց. 1, գ. 25, թ. 59–66): Դրանք հրապարակում ենք ուղղագրական և կետադրական մասնակի շտկումներով: Հեղինակային ծանոթագրությունները տրվում են աստղանիշերով:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

18. ԴԱՎԻԹ ՏԵՐ-ԴԱՆԻԵԼՅԱՆ (Դ. ԱՆԱՆՈՒՆ)

1897 թվին ես ծառայում էի Բալախանի «Անդրանիկ» հորափորական ընկերությունում, իսկ Դավիթը՝ եղբ. Թումանյանների նավթահանքի գրասենյակում:

Այդ երկու ձեռնարկություններն իրարուց շատ մոտիկ էին գտնվում, որ և հարմարություն էր տալիս ամեն օր միմյանց տեսնելու: Բացի մեր երկուսից, հաճախ հավաքվում էին և՛ ուրիշները, որոնք նույնպես եղբ. Թումանյանների հանքում էին ծառայում, ինչպես և համարյա մեր գործարանին կպած «Միներվա» նավթահանքում ծառայող Գրիգոր Միրզաբեկյանը (Խեչո):

Ես ու Դավիթը շատ մոտկացանք իրար: Այն ժամանակ նա դաշնակցական էր. հետագայում դարձավ հնչակյան, հետո՝ սոցիալ-դեմոկրատ, վերջը մտավ հայ սոցիալ-դեմոկրատների կազմակերպության «սպեցիֆիկների» շարքերը[1]: Սրանք իրանց դավանանքով մնալով մարքսիստ, ասում էին, թե ամեն մի ազգ իր առանձնահատկությունն ունի, և պետք է որ ամեն մի ազգի մեջ ազատորեն ու ավտոնոմ կերպով գործե այդ ազգի բանվորական կազմակերպությունը, ֆեդերատիվ կապերով կապվելով մյուս ազգերի բանվորական կազմակերպությունների հետ: Դավթի միտքը միշտ պրպտումներ անելով՝ վերջը կանգ առավ և այդպես էլ մնաց մինչև 1920 թիվը, որից հետո, չգիտեմ, ուրիշ էվոլյուցիա ունեցե՞լ է, թե ոչ: Պետք է որ ունեցած լինի և սուր կերպով դեպի աջ. այդպես թվաց ինձ հետագա մեր հանդիպումների ժամանակ, թեև իրան չեմ հարցրել և ինքն էլ չի ասել, թե այժմ ինչ է մտածում «իր» կուսակցության մասին:

Այդ բոլոր «մտափոխությունների» ժամանակ ես ու Դավիթը շարունակ իրար կրծելով, շարունակ իրար հայհոյելով գաղափարական-ծրագրային հողի վրա, միշտ մնացել ենք անձնական բարեկամներ, և լա՛վ բարեկամներ, սրտացավ, իրար հոգս քաշող, մեկը մյուսի ներկայությամբ իրան ուրախ զգացող բարեկամներ:

1899 թվին, երբ Դավիթը դեռ դաշնակցական էր, ես, բանվորների հետ անմիջական շփում, հարաբերություններ ունենալով ի պաշտոնե, մտածեցի, թե ինչպե՞ս կարելի էր նրանց գաղտնի թերթ տալ. սակայն տպագրական թերթ տալու մասին խոսք լինել չէր կարող, նախ, որ փող չկար, և երկրորդ՝ տպարան էր հարկավոր. ո՞վ կտպեր մեր թերթը: Դա հեշտ գլուխ բերելու բան չէր. «–Արի առայժմ ձեռագիր թերթ հրատարակենք».– ու Դավթի հետ խորհրդակցելով՝ սկսեցինք «Բանվոր» երկշաբաթաթերթը հրատարակել, մասնակցությամբ Մելիքսեթ Եսայանի: Թերթը հրատարակվեց մի քանի համար ու… դադարեց: Թերթը հարուստ էր բովանդակությամբ: Դավիթը տալիս էր դասակարգային պայքար հրահրող թարգմանական ու ինքնուրույն հոդվածներ (մի երկու էլ ոտանավոր. կարծեմ թարգմ.), ես՝ պատկերներ բանվորական կյանքից, տեղեկություններ՝ Բաքվի նավթահանքերից, Մելիքսեթը, ճիշտն ասած, լավ չեմ հիշում, ինչ էր տալիս, բայց արտագրության մեծ մասը նա էր կատարում. երկշաբաթաթերթի արտաքինը լավ էր ձևավորված:

Դավիթն այն ժամանակ թերթերում գրում էր «Դ. Նորեկ» ծածկանունով, հետո դարձավ «Դավիթ Անանուն»: Նա դպրոցական մեծ կրթություն չուներ, եթե չեմ սխալվում, միայն Շուշվա պետական երկդասյան դպրոցն էր ավարտել,

---

[1] *Խոսքը վերաբերում է Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությանը (ՍԴԲՀԿ): Հիմնադրվել է 1903 թ. հոկտեմբերին Բաքվում: Դ. Անանունը ՍԴԲՀԿ անդամ էր 1905 թ.:*

սակայն բնածին, արտասովոր ընդունակության տեր լինելով՝ կարողացել էր ինքնազարգացման, ինքնակրթության ուղիով շատ առաջ գնալ. շուտով ըմբռնում էր կարդացածը, ինչքան էլ այն խրթին լիներ իր չափի մարդկանց համար: Իսկ հիշողությունը... դա մի ուրիշ բան էր. լսածը, տեսածը, կարդացածը չէր մոռանա. այդ պատճառով նա մի հանրագիտարանի էր նմանում. ինչի մասին հարցներիր, կթերթեր իր հիշողության էջերը ու կգտներ հարցիդ պատասխանը:

Դավիթը չամուսնացավ, մի հանգամանք, որ նրան շատ նպաստեց ավելի ժրությամբ ու կենտրոնացած զբաղվել գիր ու գրականությամբ: Ազատ էր ընտանեկան հոգսերից. հոգսեր, որ մեծ խոչընդոտ են հանդիսանում մտավոր, հոգեկան թռիչքների.– երեխաների հիվանդություն, փողի պակասություն, ընտանեկան մանր հոգսեր և այլն, իսկապես՝ մեր պայմաններում մեծ արգելակներ էին, մանավանդ հալածանքների ժամանակ, երբ չես իմանում, թե երեխաներիդ ուր տանես, ինչ տաս ուտելու, հագնելու:

Դավիթը հայ գրականության ասպարեզում տեղ գրավեց մանավանդ իր «Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում» գրքերի առաջին ու երկրորդ հատորով, որոնց Գ. հատորը, սակայն, լույս ընծայել չկարողացավ[2]: Կազմել էր բազմաթիվ հայ հասարակական գործիչների, հեղափոխականների համառոտ կենսագրությունները, միմիայն նրանց, որոնք ցարական կարգերում այս կամ այն ժամանակ բանտարկվել, աքսորվել էին: Որտե՞ղ, ո՞ւմ մոտ մնացին այդ երկար տարիների ընթացքում հավաքած, գրած նյութերը, չգիտեմ:

Դավիթը կաբինետային գործիչ էր. հասարակական ելույթներ իր կյանքում միայն մի քանի անգամ կլիներ ունեցած. անձամբ մասնակցություն չէր ունեցել այս կամ այն բռնկումներին, ցնցումներին, բայց շատ սիրում էր տեսնվել ընկերների հետ, նոր ծանոթություններ հաստատել, ասել, խոսել, վիճել, իր գրածը կարդալ, ուրիշինը լսել ու շատերն էին, որ խոսակցության ժամանակ վախվխում էին նրա սուր, կծու, շեշտակի հարվածներից. շատ սրամիտ էր ու հայհոյական, բայց հայհոյական արտահայտությունները, համեմատած մյուսներին, այնքան յուրատեսակ շարժումներով ու ծամածռություններով էր տալիս, որ փոխանակ զայրացնելու՝ զվարճացնում էր:

Այդպես հիշոցաբան, նույնիսկ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, երբ բոլշևիզմի մասին ամենամեղմ նկատողությունն անգամ ծանր հետևանքներ էր ունենում, չէր քաշվում անպատկառ հայհոյանքներով խոսել իր նախկին ընկեր սոց.-դեմոկրատ, այժմ կոմունիստ դարձածների հետ, հայհոյելը կարծես թե նրա համար օրգանական պահանջ էր:

Ինչպե՞ս էր հայհոյում: Բերեմ 2-3 օրինակ:

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատվելուց հետո, թե մամուլում, թե զանազան ելույթներում սկսում են շատ խիստ հարձակվել Դավթի վրա, միշտ քննադատելով ու դատափետելով. Դավիթը ոչ մի տեղ պատասխանել, արդարանալ, հերքել չէր կարող: Մի անգամ էլ նա քաղաքային այգում լսում է, որ իր հետևից մեկը բարձրաձայն ասաց. «Ահա բուրժուական կարգերի

---

[2] *Երրորդ հատորը լույս է տեսել 1926 թ. Վենետիկում:*

ջերմ պաշտպաններից մեկը»: Դավիթը հետ է նայում, ապա դառնում այնտեղ խմբված մի քանի իրան ծանոթ հակառակորդների ու անծանոթների:

– Տո՛,– ասում է նա, իրան հատուկ շարժումներով,– բա էսպես բա՞ն կլինի. ես դառել եմ ճանապարհի ղրաղին տնկած սյուն. ամեն մի քոսոտ շուն գալիս է, ոտը ցցում, ցիթում (միզում) ինձանով տալիս, ինձ մուրտառում ու բոլորովին հանգիստ, անպատիժ անցնում, գնում:

Մի ուրիշ անգամ, Սարգիս Խանոյանը[3], որը որպես մարքսիստ-թեորետիկ Դավթից հսկայական չափերով ցածր էր կանգնած, բայց լինելով սոցիալ-դեմոկրատ բոլշևիկ, զգալի ծառայություն էր ցույց տվել Հոկտեմբերյան հեղափոխության ճանապարհին ու առաջանալով՝ նույնիսկ Կովկասյան սեյմի գործադիր կոմիտեի նախագահություն էր հասել, մի օր դառնացած՝ Դավթին խիստ նկատողություն է անում, սպառնախառն ակնարկներով: Դավիթը ծաղրական հայացքով նայում է նրան, ժպտում ու վրա տալիս.

– Դու մի հասարակ, տգետ վարժապետ, ինքդ էլ ...գյոթվերան, այժմ դառել ես Կովկասի փոխարքա, կսպառնաս, բա չե՞ս սպառնա:*

Եվ այսպես մի շարք ցինիկություններ:

Երբ լույս տեսավ իմ «Գաղափարի ճանապարհին» գիրքը, Դավիթն «Արև»-ում մի գրախոսական գրեց «Հայ դյուցազներգության մի էջը» վերնագրով: Այդ առթիվ մի քանի անգամ ակնարկներ եղան ինձ ծանոթ մի քանի սոց.– դեմոկրատների կողմից, թե Դավիթը նորից դաշնակցության շարքերն է անցել, բայց դա ճիշտ չէր. նա դաշնակցությունից հեռանալուց հետո՝ միշտ եղել է սոց.-դեմոկրատ. ստույգ ասել չեմ կարող, թե մինչև որ թիվն է այդպիսին մնացել:

1927 (?) թվին Դավիթը ձերբակալվեց ու երեք տարով աքսորվեց Ուֆա: Հետո պատիժն ավելացրին, այնպես որ նրա պատժի սկզբից մինչև պատիժը կրել-վերջացնելը տևեց 10 տարի: 1937-ին (?) վերադարձավ Բաքու, բայց... մնալ չկարողացավ, գնաց Հաշտարխան, որտեղ, ինչպես լսեցի, նորից ձերբակալվել ու բանտարկվել է: Այժմ նրա ողջ կամ մեռած լինելն ինձ հայտնի չէ:

Իր աքսորանքի օրերին դիմումներ է արել Մոսկվա ու Հայաստան, որպեսզի ազատ արձակեն, չի հաջողվել:

Սիմեոն Զավարյանը[4] մեռել էր Տաճկաստան ու դիակը պետք է բերվեր Թիֆլիս՝ Պոլսից: Բաքուն երեք հոգուց բաղկացած մի պատգամավորություն ուղարկեց Բաթումում դիմավորելու: Պատգամավորության մեջ ես էի.– դաշնակցական, Դ. Անանունը.– սոց.- դեմոկրատ, Երվանդ Թաղիանոսյանը[5] – կադետ:

Այն հյուրանոցը, որտեղ մենք էինք իջել, Բաթումի հասարակական գործիչներից մի քանիսը եկան մեզ այցելելու. բնականաբար, սկզբում խոսակցությու-

---

[3] *Սարգիս Խանոյան (1877–1937).– ՌՍԴԲ(բ)Կ անդամ, լրագրող, խմբագիր: 1925 թ. եղել է Անդրկենտգործկոմի նախագահը:*

[4] *Սիմոն Զավարյան (1866–1913).– ՀՅԴ կուսակցության հիմնադիրներից:*

[5] *Երվանդ Թաղիանոսյան (1864–1948).– հասարակական գործիչ, թարգմանիչ:*

նը տարվեց Սիմեոն Զավարյանի անձնավորության շուրջը, որտեղ թվարկվում էին նրա բարեմասնություններն ու անձնվիրությունը:

– Զավարյանը բացառիկ մարդ է,– իր հերթին ասաց Դավիթը,– դաշնակցությունը նրա պես մարդիկ էլի տվել է, ու ես գաղափարական հակառակորդ լինելով դաշնակցության, անկեղծորեն խոստովանում եմ, որ ինձ համար ցավալի է, երբ մի կարգ մարդիկ Տաճկահայաստանի ազատագրման համար զոհված մարդկանց բանդիտներ են անվանում, իսկ բուլղարական, սերբիական ազատագրության համար պայքար մղածներին կամ ընկածներին՝ ժողովրդական հերոսներ:

Այդպես բավական խոսեց նա, ավելացնելով, թե չի կարելի չտեսնելու դնել, առ ոչինչ համարել մի կուսակցություն, որն իր հետևից տասնյակ տարիներ քաշել է հայ հասարակության մի շատ խոշոր մասը, մի կուսակցություն, որ շատ մեծ մասնակցություն ունի հայի կուլտուրական մակարդակը բարձրացնելու գործում, որի շուրջն են համախմբված եղել հայ մտավորականության, ինտելիգենցիայի մեծագույն մասը. «– Սակայն պարզապես թյուրիմացություն ու հանցանք կլինի դաշնակցությանը սոցիալիստական կուսակցության անուն տալը»:

1918 թվին ես Հյուսիսային Կովկաս փակված մնացել էի. այնտեղ՝ Էսենտուկի, ընտրված էի նախագահ Հայոց ազգային խորհրդի ու նախագահ դաշնակցության տեղական կոմիտեի, որի անդամներից միայն մեկին եմ հիշում, Պողոս Եղիազարյան, տաճկահայ: Ազգային խորհրդի համար վերցրել էի Կայալով անունով մի հայի ամառանոցը, բաղկացած մի քանի սենյակից: Շենքը վերցրել էինք ձրիաբար, տերն Ռուսաստանի չգիտեմ որ քաղաքում էր, բայց նա ուրախ կլիներ, որ տունը չքանդող ձեռքերում է գտնվում:*

Մի օր այնտեղ, խորհրդի գրասենյակում նստած, խոսում էի Կիսլովոդսկից եկած Մարտին Շաթիրյանի հետ, մին էլ տեսնեմ ներս ընկավ Դ. Անանունը:

Երկուսիս ուրախությունն էլ մեծ էր: Բաքվից էր դուրս եկել ու մի կերպ հասել Էսենտուկի, իմացել, որ այդտեղ կա Հայոց ազգային խորհուրդ ու ես էլ խորհրդում եմ գտնվում, շտապել էր մոտս: Եվ սկսեցինք հարցուփորձը:

Հետաքրքիր զրույցը երկար տևեց, բայց այդքան ժամանակ խելքս չկտրեց հարցնեմ, թե որտե՞ղ է իջել: Ինքը խոսք բաց արավ:

– Դու այստեղ արդեն «հնություն» ես, բոլոր ծակուծուկերին ծանոթ, ասա, որտե՞ղ կարող եմ տեղավորվել:

– Ա՜... ես մոռացա նույնիսկ հարցնել, թե որտեղ ես իջել, բայց անհոգ կաց, այդ մասին մտածելն ավելորդ է, քեզ կհրավիրեի մնալ ինձ մոտ, բայց մի սենյակում տեղավորված ենք 7 հոգի, ուզեմ, չուզեմ, ուրիշ տեղ պետք է սազացնեմ: Այդպիսի տեղ կա. քեզ կհատկացնեմ Ազգային խորհրդի տրամադրության տակ գտնվող շինության մի սենյակը, որ, բարեբախտաբար, ազատ է. կգնանք, կճաշենք ինձ մոտ, հետո կգաս սենյակդ: Գնանք, «պալատդ» տես:

---

* *Որոնք երկար կյանք չունեցան «անկախ» պատճառներով:*

Մաքուր, լուսառատ սենյակ էր. բանալին տվի Դավթին, կողպեց, դրավ գրպանը, որից հետո գնացինք ճաշելու:

Այդ ժամանակ դրությունս վատ էր նյութականի կողմից. հետս վերցրած փողը հալչում էր, ակրեդիտիվով փոխադրած գումարից ամսեկան մի չնչին բան էին տալիս, ուրիշ ոչ մի տեղից ոչ մի սպասելիք չունեի:

Չգիտեմ ինչքան ժամանակ էր անցել, Ազգային խորհրդի «շուշաբանդում» Դավիթն առաջս ելավ:

– Ողջույն հայոց ազգի հավատարիմ զավակին, – դեմքը ծռմռելով՝ երկու մատը բարևի մեկնեց նա:

– Ողջույն հայոց ազգի անառակ որդուն, – ժպտացի ես, երկու մատը սեղմելով:

– Այժմ լսիր, – շարունակեց նա, այս անգամ լրջությամբ: – Մոսկվայից Հաշտարխանի վրայով այստեղ է եկել Վահան Տերյանը. այսօր մոտն եմ եղել. խոսեցինք շատ երկար ու ամեն ինչից. իր հետ մի մեծ գումար փող է բերել, որից մտադիր է բաժին հանել Հյուսիսային Կովկաս ապաստանած ու նեղության մեջ գտնվող հայ գրողներին ու գործիչներին, – ապա տվավ մի շարք անուններ, որոնցից միայն ինձ եմ հիշում, Դավթին, Հովհաննես Հովհաննիսյանին[6] ու Տիգրան Հովհաննիսյանին[7], – օգնությունը չնչին չի լինի, այլ զգալի, – ավելացրեց նա:

– Այդ շատ լավ է, Դավիթ, բայց ես չեմ վերցնի, – գլուխս բացասաբար շարժեցի ես:

– Տո, ամեն ազգ ու ազինք կծափահարեն քո խելոքությունդ... Սանկյուլոտ[8],– ծաղրեց Դավիթը,– երևի շատ ես հարուստ: Վաղը վերջնականապես կորոշվի, թե ում՝ ինչքան տալ. քո բաժինը ես կստանամ ու կբերեմ, եթե ինքդ չբարեհաճես ապրուստիդ հետևից վազել:

Երկու օրից հետո Դավիթը մտավ իմ բնակարանս:

– Այսպես ուրեմն, վճռվեց, – ասաց նա:

– Ի՞նչը, – հարցրի նրան, սակայն իմանալով, թե ինչը վճռվեց:

– Դուրս գանք պարտեզ:

Դուրս եկանք ու նստեցինք բակի պարտեզի նստարաններից մեկին:

– Որոշեցին քեզ տալ 2000 ռուբլի, – կիսատ թողածը շարունակեց Դավիթը, – Տերյանը նշանակել էր 4000 ռուբլի, բայց էն անիրավ Գուրգեն Հայկունին[9] հարայ-հրոց բարձրացրեց, թե Արամայիսը շեշտված դաշնակցական է, նրան ոչինչ չպետք է տալ: Տերյանը հակաճառեց, թե նպաստը տրվում է նեղության մեջ ընկած գրող Արամայիսին, անկախ այն բանից, թե նա ինչ կուսակցության է պատկանում, մատնանշեց, թե Արամայիսը գեղարվեստական շատ բաներ է

---

[6] *Խոսքը բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի (1864–1929) մասին է:*

[7] *Նկատի ունի թարգմանիչ, գրական գործիչ, իրավաբան Տիգրան Հովհաննիսյանին (1865–1921):*

[8] *Ֆր.* “sansculotte” *բառն է. նշանակում է՝ մարդ, որ չի կրում կարճ անդրավարտիք: Այն «հայրենասեր», «հեղափոխական» բառերի հոմանիշն է:*

[9] *Գուրգեն Հայկունի (1889–1966).– ՌՍԴԲ(բ)Կ անդամ, հրապարակախոս, գրող, թարգմանիչ:*

տվել, ինչպես «Հողի մարդը» և այլն, որոնց համար և արժանի է օգնության: Հայկունին, նրա հետ և ... (մոռացել եմ) նորից բողոքեցին. վերջապես Տերյանը անցկացրավ իր ցանկացածը, միայն չորս հազարը շինեցին երկու հազար:

– Ես դեռ առաջի օրն ասացի, թե կհրաժարվեմ վերցնելուց, այժմ՝ առավել ևս... Եթե իմ բախտս վճռողները Հայկունիները պետք է լինեն... Իսկ ինքը, «հայտնի պոետ» Գուրգեն Հայկունին բաժին ստանո՞ւմ է:

– Է՛, էդ էլ բա՞ն է, որ ասում ես: Նա «բաժիններ» շատ է ստանում: Իրանցն է, չէ՞, ինչո՞ւ չստանա. այդ բոլորից հետո ինչո՞ւ դու էլ չստանաս քո 2000-ը: Շուտով այդ գումարն իմ ձեռքով գրպանդ կդնեմ:

Այդ դեպքից երեք օր անց, շուկայի մոտ գտնվող մի տաճկահայ ծանոթիս՝ Սերոբի մոտից տուն դառնալիս, կայարանի այն կողմը Դավթին հանդիպեցի:

– Տո, որտե՞ղ ես, երկու ժամ կլինի, ճանապարհդ եմ պահում: Ձեր տանն էլ չգիտեն, թե ուր ես գնացել, – մի տեսակ մտահոգված դեմքով ասաց նա:

– Ծանոթի մոտ էի գնացել: Ի՞նչ կա, մի տեսակ ես երևում, – հետաքրքրվեցի ես:

– Ժամը 10-ին Տերյանի մոտ էի, բայց մինչև բերանս բաց կանեի, նա ունքերը կիտած, ում որ հասցեին դժգոհ, վրա տվավ. «Գիտե՞ս, Դավիթ, այս գիշեր քեզ, Արամայիսին ու մի քանի ուրիշ աչքի ընկած դաշնակցականների պետք է ձերբակալեն. գլխներիդ ճարը տեսեք»:

Ես չշփոթվեցի, բայց դառը ժպտացի:

– Է՞դ էր քո խոստացած 2000 ռուբլին, – հեգնեցի ես, – լավ, դու ժամանակ ես ունեցել մտածելու, ի՞նչ ես որոշել անել:

– Ի՞նչ պետք է որոշեմ, թող գան ու ձերբակալեն:

– Չէ, ես այդպես չեմ մտածում: Ես կթաքնվեմ:

Այդպես էլ արինք. Դավթին և ուրիշներին այդ գիշեր ձերբակալեցին, իսկ ես թաքնվեցի Թովմաս Հովնաթանյանի մոտ: Երեք հոգի, հայեր, գալիս են իմ բնակարանս խուզարկում, կնոջս հարցուփորձ անում, ստիպում, թե որտե՞ղ է մարդդ, սպառնում, բայց կինս առանց իրան կորցնելու կարողանում է պինդ կանգնել ու հավատացնել, թե տեղս չգիտե և կեսօրին, որ դուրս եմ եկել, էլ տուն չեմ վերադարձել, երևի գնացել է Կիսլովոդսկ:

Դավիթն ազատվում է Վ. Տերյանի միջնորդությամբ: Ազատվում է ու ջանքեր գործ դնում Հյուսիսային Կովկասից հեռանալու. դրա համար հարկավոր էր անցաթուղթ, որ շատ դժվարությամբ էր ձեռք բերվում. այդ ևս հաջողվում է Դավթին, որքան գիտեմ թուղթն Օթարբեգյանն է տալիս, և Դավիթը դուրս է գալիս Էսենտուկուց:

Իսկ ես... ես էլ երեխաները թողած «Աստծու խնամքին», ծպտված «գնացել էի» Պյատիգորսկ, մեր գյուղացի մեկի մոտ:

Ամիսներ հետո ես էլ հեռացա Էսենտուկուց, բոլորովին քամված, գրպանումս ունենալով այնքան փող, որ եթե ունեցած հագուստից մի բան

էլ ծախեի, վրան դնեի, մի կերպ կարող էր հասցնել Բաքու. փողի մի մասն ստացել էի Շաթիրյանից:

Մեծ նեղություններով հասա Տուապսե ու 7 հոգով տեղավորվեցինք մի սրճարանի հետևի փոքրիկ սենյակում:

Շոգենավային հաղորդակցությունը չափազանց անկանոն էր, երբեք չէր կարելի իմանալ, թե որ օրն է շոգենավ սպասվում. ասում էին՝ պատահում է վեց օրենը մեկ է գալիս, պատահում է՝ երեք օրենը, ութ օրենը մեկ: Դա ինձ համար բոլորովին ձեռնտու չէր. նախ, որ փողս սպառվում էր, երկրորդ, որ շտապում էի հասնել Բաքու, չէ՞ որ այնտեղ տուն-տեղ ունեի և երրորդ, վախենում էի երեխաներից հիվանդացող լինի. այդ պատճառով աչքս շարունակ ծովին էր, թե շոգենավ չի՞ երևում արդյոք:

Սրճարանատերը տաճկահայ էր ու բավական գրագետ. ինչպես էր իմացել էր, որ ես «Արամայիսն» եմ:

– Ինչպե՞ս չէ, ես կարդացել եմ ձեր բոլոր գրքերը, – իմ զարմացած հարցին պատասխանեց նա ու ավելացրեց. – մի քանի օր առաջ ձեր մասին մի բան կար գրած «Մշակում»:

– Այստեղ «Մշակ» ստացվո՞ւմ է, փոստն աշխատո՞ւմ է, – զարմացա ես:

– Շատ անկանոն, բայց մեկ-մեկ ստացվում է:

– Ի՞նչ էր գրած:

– Հիմա գտնեմ, բերեմ:

Բերավ «Մշակը» (մարտ ամսի՞): Դավիթ Անանունն էր. մի ցասկոտ հոդված էր գրել ուղղված հայ հասարակությանը, որտեղ կոչ էր անում շուտափույթ օգնություն հասցնել Հյուսիսային Կովկաս կարիքի ճիրաններում տառապող հայ գրողներին՝ այսինչին, այնինչին և այլն: Ամբողջը չեմ հիշում, բայց առանցքն այդ էր: Էսենտուկուց դուրս գալուց հետո հասել էր Թիֆլիս ու աղմուկ բարձրացրել, որ, սակայն, չիմացա, թե ինչ արդյունք ունեցավ:

Քամին մեզ հանդիպեցրեց զանազան տեղեր, զանազան ժամանակներում, բայց միշտ դառը պայմաններում թե՛ ինձ և թե՛ իր համար:

Վերջին անգամ իրար պատահեցինք Բաքու, 1937-ին (?), երբ նա աքսորանքից վերադարձել էր: Այդ ժամանակ ինձ թվեց, թե ինչ ձեռագիր աշխատություններ ունի և որ այդ աշխատությունները գտնվում են Հաշտարխանում: Ասաց նույնպես, թե ում մոտ, բայց մոռացել եմ:

Դավթի աշխատությունները (ձեռագրերը) 1942 թվին գտնվում էին Բաքու, մեկի մոտ, որը մեռել է (ում մոտ, մոռացել եմ)[10]:

---

[10] *Այս նախադասությունը գրված է մատիտով:*